ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918 Թ.

Ռ. Լ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Վերլուծելով և համադրելով Հայաստանի բուրժուական հանրապետության ստեղծմանը և պրոբլեմներին վերաբերվող այն դրույթները, որոնք առաջ էին քաշվել խորհրդային պատմագիտության մեջ, գալիս ենք պարադոքսային եզրակացության։ Աշխատությունները, որոնք բառացիորեն լցոնված են մարքսիզմի դասականների մեջբերումներով, կոնյունկտուրային կեղծ դաղափարախոսական նկատառումներից ելնելով անտեսում և փաստորեն ժխտում են նրանց տեսական ժառանգությունը։

1918 թ. մայիսի վերջին վերականգնվեց դարեր առաջ կորցված հայ ժողովրդի պետականությունը։ Գնահատելով այդ փաստը, ուսումնասիրողը, որն իրեն իրազեկ է համարում, պետք է հենվի Ֆ. Էնգելսի հիմնարար այն մտքի վրա, որ «առանց յուրաքանչյուր առանձին ազգի անկախության և միասնության հաստատման հնարավոր չէ ո՛չ պրոլետարիատի ինտերնացիոնալ միասնությունը և ոչ էլ այդ ազգերի խաղաղ և գիտակից համագործակցությունն ընդհանուր նպատակներին հասնելու համար»[1]։ Այսպիսով, ըստ Ֆ. Էնգելսի՝ պետականության առկայությունն անհրաժեշտ նախադրյալ է ինչպես ազգային, այնպես էլ սոցիալական առաջընթացի համար։

Հայկական նորաստեղծ պետությունը բուրժուապառլամենտական դեմոկրատական հանրապետություն էր։ Վ. Ի. Լենինն ունի բավականաչափ ճշտորոշ այդպիսի պետության գնահատման չափանիշներ։ Բերենք առավել հայտնի նրա բնորոշումները։ 1. «Բուրժուական պետություններից ամենակատարյալը, առաջավորը պառլամենտական դեմոկրատական հանրապետության տիպն է»[2]։

2. «Մենք կողմնակից ենք դեմոկրատական հանրապետության, իբրև կապիտալիզմի օրոք պրոլետարիատի համար պետության լավագույն ձևի»[3]։

3. «Հանրապետությունը կապիտալիստական հասարակության քաղաքական վերնաշենքի հնարավոր ձևերից մեկն է, ըստ որում ամենադեմոկրատականը արդի պայմաններում»[4]։

Քիչ հավանական է, որ դոգմատիկական ուղղությանը պատկանող պատմաբանները, որոնք առանց էության մեջ խորամուխ լինելու անգիր են արել առաջնորդի հիսունհինգ հատորները, ծանոթ չլինեն տվյալ գնահատականներին։

Բայց և այնպես, դոգմայի գերիները կանոնավոր առաջ են քաշում գիտությունից հեռու գտնվող դրույթներ, որոնք աղավաղում են ճշմարտությունը հայկական բուրժուական հանրապետության մասին։ Այդպիսի դոգմատիկ առասպելների թվին է պատկանում այն բանի պնդումը, թե իբր հայկական պառլամենտն ուներ շինծու և հակադեմոկրատական բնույթ։ Այստեղից էլ բխում էր հեռուն գնացող այն հետևությունը, թե իրականում չկար պառլամենտ, բուրժուական դեմոկրատիա, չկար ռեալ հանրապետություն, կար միայն դժոխային դիկտատուրա՝ «Դաշնակցական Հայաստան»։

Արհեստականորեն շրջանառության մեջ ներարկված «Դաշնակցական Հայաստան» հասկացությունը ուներ ոչ այնքան լեզվաբանական, որքան նիհիլիստական հակազգային դաղափարախոսական բնույթ։ Եվ հենց այդ

---

1 К. Маркс, Ф. Энгельс, Соч., 2-е изд., т. 22, с. 382.

2. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 31, էջ 197։

3 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 33, էջ 25։

4 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 119։

առասպելն են հիմք ընդունում իրենց հակահայկական հերյուրանքներում բունիաթովները՝ մեր ժողովրդի ազնիվ հայրենասիրական ձգտումները որակելով իբրև այսպես կոչված «դաշնակցականություն»։

Այս հոդվածում գիտական փաստերի հիման վրա կփորձենք հերքել Հայաստանի հանրապետության պառլամենտի ստեղծման և գոյության առաջին ամիսների մասին մինչև այժմ գոյություն ունեցող առասպելը, օբյեկտիվորեն արձանագրելով նրա պատմության մեջ և՛ դրականը, և՛ բացասականը։

Ինչպե՞ս է կազմվել Հայաստանի պառլամենտը։ Ինչպես նշում է բոլշևիկ, պառլամենտի անդամ Արշավիր Մելիքյանը, «1917 թ. ամռանը ռուսահայ հասարակական ու քաղաքական գործիչների մեջ միտք է հղացվում, որպես հետևանք այդ ժամանակվա քաղաքական-հասարակական կյանքի հանգամանքների, հրավիրել ռուսահայոց ընդհանուր ազգային համագումար։ Համագումարը կազմակերպելու, հրավիրելու համար բոլոր քաղաքական կուսակցություններից ընտրվում է մի մարմին՝ միջկուսակցական անունով և հրահանգվում է համագումարը հրավիրել քառանդամ ընտրողական նորմակով, որպեսզի այն լիներ բովանդակ հայ ժողովրդի բոլոր դասերի ու դասակարգերի արտահայտիչը։

Համագումարի այդ ձևով որոշված ու ծրագրված ընտրությունները և հրավիրումը երկու ամսվա ընթացքում (հուլիս—օգոստոս) հինգ անդամ նշանակվում, սակայն հինգ անդամ էլ չեն կայանում (անտեսվել էին ռուսահայերի սփռվածության գործոնը անծայրածիր Ռուսաստանում, կոնկրետ քաղաքական իրադրությունը, պատերազմը—Ռ. Խ.)։ Ու քանի որ ռուսահայոց համագումարը այդ ձևով գլուխ չի գալիս, ուստի նույն այդ միջկուսակցական մարմինը ձեռնարկում է հրավիրել ազգային համախորհրդակցություն, սակայն այս անգամ, ելնելով անցյալի դառը փորձից, այն չի գումարվում քառանդամ ընտրողական հիմունքներով, այլ կազմվում է հայ ազգի մեջ գոյություն ունեցող բոլոր դասերի, դասակարգերի և հոսանքների ներկայացուցիչներից։ Համախորհրդակցությանը մասնակցելու են հրավիրվում ներկայացուցիչներ բոլոր հոսանքներից, քաղաքական կուսակցություններից, հասարակական-ազգային կուլտուրական, դպրոցական հաստատություններից, դեմոկրատական կազմակերպություններից, հոգևորականությունից և այլն։ Քաղաքական կուսակցություններից դաշնակցությանը հատկացվում է 8, հայ ժողովրդական կուսակցությանը՝ 2, հայ կադետներին՝ 1, սոցիալ-դեմոկրատներին, մենշևիկներին՝ 2, բոլշևիկներին՝ 1, սոցեցիֆիկներին՝ 1, սոցիալիստ-հեղափոխականներին՝ 2, հնչակյաններին՝ 2 տեղ։

Այս ձևով գումարված ազգային խորհրդաժողովը կողմերի հավասարության (պարիտետի) սկզբունքներով իր միջից ընտրում է գործադիր մարմին և նրան լիազորում իր ձեռքը վերցնել հայ ամբողջ քաղաքական-հասարակական կյանքի ղեկը։

Պարիտետի սկզբունքներով ընտրված մարմինը, որը կոչվեց կենտրոնական ազգային խորհուրդ, կրում էր համազգային խորհրդաժողովի պատկերը, նրա մեջ յուրաքանչյուր հոսանք տալիս էր այնքան ներկայացուցիչ, որքան դա թույլ էր տալիս նրանց ներկայացուցչությունը խորհրդաժողովում, դաշնակցականներից՝ 6, սոցիալիստ-հեղափոխականներից՝ 2, մենշևիկ-սոցիալ-դեմոկրատներից, սպեցիֆիկներից և հնչակյան բլոկից՝ 2, հայ ժողովրդական կուսակցությունից՝ 2 և անկուսակցականներից՝ 3 հոգի[5]։

1918 թ. հուլիսի 20-ին կենտրոնական ազգային խորհուրդը Թիֆլիսից տեղափոխվեց Երևան։ Կենտրոնական և Երևանի ազգային խորհուրդների մի շարք խառը նիստերում վերջնական ձև ստացավ Հայաստանի խորհուրդը։ Սկզբնական շրջանում Հայաստանի խորհուրդը սովորաբար կոչվում էր խորհրդարան։ «Խորհուրդ» և «խորհրդարան» բառերը հոմանիշներ էին թե՛ պատգամավորների ճառերում և բանաձևերում, թե՛ մամուլում և թե պաշտոնական փաստաթղթերի մեջ։ Պաշտոնական անունը, սակայն, Հայաստա-

5 Ա. Մ. Մելիքյան, Ընտիր երկեր, Երևան, 1982, էջ 89—92։

նի խորհուրդ էր։ Որոշվեց, հակառակ ժողովրդականների քվեի, եռապատկել Ազգային խորհրդի անդամների թիվը և հրավիրել նաև այլազգիների՝ թուրքերի, եզիդիների ու ռուսների ներկայացուցիչներին։ Կուսակցություններն իրավունք ունեին փոխել իրենց պատգամավորներին՝ հրաժարեցնել մեկին, նշանակել ուրիշին։

1918 թ. օգոստոսի 1-ին (հինգշաբթի) ժամը 11-ն անց 30-ին, Օրևանում բացվեց Հայաստանի հանրապետության անդրանիկ գերագույն օրենսդրական ժողովի՝ Հայաստանի խորհրդի, առաջին նստաշրջանը։

Ինչպես հաղորդում էր պաշտոնական տեղեկագրությունը, զետեղված «Հորիզոնում», ժողովը ուներ սովորական տեսք։ Ոչ մի զարդարանք փողոցներում։ Դրոշակներ կային մի քանի պաշտոնական շենքերի վրա։ Խանութները բաց էին։ Կառավարությունը որևէ միջոց ձեռք չէր առել և թողել էր, որ ազգաբնակչությունն ինքը որոշեր իր վերաբերումը, և ամեն ոք ըստ սովորության՝ իր գործի հետևից էր։ Միայն խորհրդի առաջ և շուրջը տիրում էր սրտակարդ եռուզեռ։ Ժողովուրդը խռնվել էր այգում և մայթերի վրա։ Ցորը՝ հետևակ, այրուձի, թնդանոթաձիգ ու գնդացիր, երաժշտությամբ ու դրոշակներով հավաքվում և բռնում էր քաղաքային այգին շրջապատող փողոցները։ Խորհրդի համար հատկացված էր քաղաքի կենտրոնական այգու դիմաց գտնվող, թեմական դպրոցին պատկանող շենքը, ուր տեղավորված էր քաղաքային ակումբը։ Ակումբի թատերասրահը վերածված էր խորհրդի ընդհանուր ժողովասրահի, իսկ կողքի սենյակները՝ նախագահության, ֆրակցիաների, դիվանատան և այլն։

Բեմի վրա շինված էր նախագահության օթյակը՝ աջ կողմը ունենալով մի սեղան թարգմանիչների համար, ձախ կողմը՝ ճառախոսների ամբիոն։

Դահլիճի առաջին մասում, բեմին կից, շինված էին երկուական օթյակներ։ Ձախ թևի առաջին օթյակը հատկացված էր կառավարությանը, երկրորդը՝ զորահրամանատարությանը։ Աջ կողմի առաջին օթյակը կաթողիկոսի համար էր, իսկ երկրորդը՝ օտար պետությունների ներկայացուցիչների։

Դահլիճի միջին մասը վերապահված էր խորհրդի անդամներին։ Հետևի մասը և վերնահարկը՝ հասարակության։

Խորհրդի մուտքի երկու կողմը կախված էին երկու դրոշներ՝ ազգային գույներով՝ կարմիր, կապույտ և նարնջագույն։

Նշանակված ժամանակին արդեն բոլոր տեղերը զբաղված էին։ Դահլիճի մեջտեղը շարված էին խորհրդի անդամները՝ հետևյալ կարգով՝ հաշվելով աջից ձախ։ Աջ կողմը հայ ժողովրդական կուսակցության ֆրակցիա— Ստ. Մալխասյան, Արշալույս Մխիթարյան, Գր. Տեր-Խաչատրյան, Հովհ. Մելիքյան, Դարեդ. Ենգիբարյան, Սիր. Տեր-Մարտիրոսյան։

Անկուսակցական—Ստ. Մամիկոնյան, Պետ. Ջաքարյան։

Մահմեդական պատգամավորներ—Սեիդ-Ռիզա Միր-Բաբան, Միրզա Ջաբար Մամեդով, Աբբեր աղա Իսմայիլով, Միր-Բաղիր Միր-Բաբան, Մամեդ-բեգ Մամեդբեգով, Ասադ բեգ Աղաբեգով։

Ռուս պատգամավոր—Իվան Ջորին։

Եզիդի պատգամավոր—Յուսուֆ բեգ Թեյմուրով։

Կենտրոն Հ. Հ. դաշնակցության ֆրակցիա—Ավ. Սահակյան, Սիր. Տիգրանյան, Սմբ. Խաչատրյան, Սահ. Թորոսյան, բժ. Արտ. Բաբայյան, Եփր. Սարգսյան, Ռ. Տեր-Մինասյան, բժ. Հովհ. Տեր-Միքայելյան, բժ. Արշ. Ղազարյան, Հով. Բուդաղյան, Տիգ. Ռաղմաչյան, Թադ. Թոշյան, Հակ. Տեր-Հակոբյան, Հ. Սարգսյան, Արտ. Վանցյան, Արշալույս Աստվածատրյան։

Ձախ կողմը. Սոցիալիստ-հեղափոխական—բժ. Գր. Տեր-Հակոբյան, Դավ. Զուբյան, Արշամ Խոնգկարյան, Գ. Տեր-Օհանյան, Տիգ. Մուշեղյան, Արմ. Ավետիքյան։

Սոցիալ-դեմոկրատ—Արշավիր Մելիքյան (մեծամասնական), Հայկ Աղատյան, Թադ. Ավդալբեկյան, Մ. Ղարաբեգյան, Ա. Մելիք-Աղաջանյան, Հովհ. Ջաքարյան (փոքրամասնականներ)[6]։

---

6 Պատգամավորների այս ցանկը հետագայում ենթարկվեց փոփոխությունների։

Կառավարական օթյակում նստած էին վարչապետ Հ. Քաջազնունին իր դահլիճի մյուս անդամների հետ միասին—ներքին գործոց նախարար Արամ Մանուկյան, զինվորական նախարար զոր. Հովհ. Հախվերդյան, ֆինանսների նախարար Գրիգոր Պետրոսյան։ Դիվանագիտական օթյակում նստած էին Գերմանիայի, Ավստրիայի և Թուրքիայի ներկայացուցիչները, պարսից հյուպատոսը, ռուս, թուրք և ուկրաինական ազգային խորհուրդների ներկայացուցիչները։ Զինվորական օթյակում կային Հայաստանի հանրապետության առաջին սպարապետ զոր. Թովմաս Նազարբեգյանը, զոր. Սիլիկյանը, Դրոն և ուրիշ զինվորականներ։ Պարապ էր միայն կաթողիկոսի օթյակը։

Մամուլի ներկայացուցիչներին հատկացված էր առանձին տեղ։ Հասարակության համար վերապահված տեղերը՝ դահլիճի հետևի մասը և վերնահարկը զբաղված էին հյուրերով և ունկնդիր հասարակությամբ։ Աղատ տեղ չկար։ Ամբողջ սրահը կրում էր խորհրդավոր բնույթ. պատգամավորներն ու հասարակությունը ամենքն լուռ էին ու մտահոգ»[7]։

Ժամը 11-ն անց 30-ին ամբիոն է բարձրանում Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանը և բաց անում Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը հետևյալ խոսքերով. «Քաղաքացիներ, պատգամավորներ Հայաստանի խորհրդի։ Գերագույն Հայոց Ազգային խորհրդի կողմից ես պատիվ ունիմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի խորհրդի և հայտարարել, որ այսուհետև սա է միակ լիազոր մարմինը՝ ամփոփող իր մեջ Հայաստանի հանրապետության պետական իշխանությունը։

Այս օրը կդառնա մեզ համար պատմական և կը բանա մի նոր լուսավոր դարաշրջան, մեր երիտասարդ պետության կյանքում, ինքնուրույն քաղաքական և տնտեսական զարգացման։ Այս օրը կը մնա միշտ հիշատակելի և այն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահմաններում գեղեցիկ երազներն ու նվիրական տենչը ինքնորոշման, թեև անհնարին դժվարին պայմաններում... Այո, մեր հանրապետությունը փոքր է և նեղ իր սահմաններով. նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակչությունը և, կարծես թե, պայմաններ չունի անկախ գոյության համար։ Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ, ես հավատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե ուժով, մեր արդար և անվիճելի իրավունքների պաշտպանությամբ...։ Այսօր այստեղ առանց տատանումների և լիակատար վճռականությամբ մենք գցում ենք խարիսխը մեր պետական նավի և դնում ենք հիմքը պետական շենքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրության Հայաստանի հանրապետության բոլոր ազգությունների, իբրև զավակներ մեկ հարազատ մայր հայրենիքի»[8]։

Բացման ճառից հետո, ժամը 12-ին, ժողովրդական «Կեցցե»-ների և «Մեր հայրենիք» նվագով խորհրդի շենքի գլխին բարձրացվեց հայկական եռագույն դրոշը։

Այսպիսով, հայ ժողովուրդը մտավ բուրժուական պառլամենտարիզմի շրջան։

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանը ոչ թե պրեզիդենտական, այլ պառլամենտական հանրապետություն էր։ Պառլամենտական հանրապետության գլխավոր սկզբունքն այն է, որ պառլամենտը գերակա է կառավարության նկատմամբ, որը պառլամենտի առջև պատասխանատու է իր վարած քաղաքականության համար։ Հայաստանի պառլամենտի էսէռական ֆրակցիայի նախագահ Արշամ Խոնդկարյանն ընդգծում էր, որ «պետության գլխի բոլոր իրավասությունները մնացին Հայաստանի խորհրդի ձեռքում, որով այս մարմինը օրենսդրականից զատ ստանձնեց նաև մի քանի վարչական ու դատաստանական ֆունկցիաներ։ Ամենագլխավորը դրանց մեջ կառավարությունն

7 Հորիզոն, 9. VIII. 1918։

8 Նույն տեղում։

կազմելու ֆունկցիան էր, որը պառլամենտական երկրներում պատկանում է հանրապետության նախագահին կամ սահմանադրական միապետին, իսկ Հայաստանում այն դարձավ խորհրդարանի առանձնաշնորհը։

Վարչապետից բացի, Հայաստանի խորհուրդը իրեն վերապահեց նաև ոստիկան վերահսկիչի ընտրության իրավունքը, միաժամանակ իրեն ենթարկելով վերահսկողության ամբողջ գործը։ Հայաստանի խորհրդին տրվեցին նաև մյուս բոլոր այն իրավունքները, որոնք պառլամենտական երկրներում վերապահված են պետության գլխին։ Հիշենք պետական բարձրաստիճան պաշտոնյաներին պաշտոնի մեջ հաստատելու, դատապարտյալներին ներում շնորհելու կամ պատիժը մեղմացնելու և ուրիշ այսպիսի մի շարք իրավունքներ։

Այս ամենից զատ, Հայաստանի խորհուրդը շատ հաճախ հանդես էր գալիս որպես գործադիր մարմին ու իր հանձնաժողովների միջոցով տնօրինում զուտ վարչական բնույթ կրող գործեր, ինչպիսիք են խոլերայի և վարակիչ հիվանդությունների դեմ մաքառելու, ժողովրդի պարենավորման, գաղթականներ՝ խնամատարության, քաղաքացիական ազգաբնակչության զինաթափման և այլ գործերը։

Բացի վերոհիշյալ իրավունքներից, Հայաստանի խորհուրդը կարևոր դեր ուներ նաև երկրի արտաքին քաղաքականությունը վարելու մեջ։ Քաջազնունու առաջին վարչակազմը արտաքին հարաբերությունների բնագավառում ոչ մի կարևոր քայլ չարեց առանց ավագների խորհրդի կամ ֆրակցիաների խառը ժողովների կարծիքը հաշվի առնելու։

Ինչ վերաբերում է օրենսդրական գործունեությանը, ապա այդ ասպարեզում Հայաստանի խորհրդի իրավասությունները շատ ավելի լայն էին, քան այն, որ ունեն պառլամենտական երկրների համապատասխան մարմինները։ Խնդիրն այն է, որ Հայաստանը անցյալից ստացած պատրաստի ժառանգություն չուներ և, ինչպես նկատում էր Հ. Քաջազնունին իր հայտագրի մեջ, «ամեն բան հարկադրված էինք սկսել սկզբից»։ Եվ Հայաստանի խորհուրդը իր վրա վերցնելով «անձև քաոսի ու ավերակների» գործը, ստիպված եղավ, անտեսելով իշխանության բաժանման սկզբունքը, զուտ վարչական հրահանգներ ու որոշումներ արձակել օրենսդրության անվան տակ։ Այս շրջանում հրատարակված օրենքների վրա մի թռուցիկ հայացք գցելը բավական է տեսնելու, որ դրանց երկու երրորդը ավելի շատ վարչական կարգադրություններ են, քան օրենքներ բառի իսկական իմաստով»[9]։

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, թե ինչպիսի հսկայական իշխանություն էր կուտակել իր ձեռքում հայկական պառլամենտը։ Նկատենք, որ Հայաստանի խորհրդարանում դաշնակցությունն ուներ ձայների միայն 28 %-ը։ (Պառլամենտում ձայները ըստ ֆրակցիաների տեղաբաշխված էին հետևյալ կերպ՝ դաշնակցության ֆրակցիան ուներ 18 ձայն, ՀԺԿ՝ 6, սոցիալիստ-հեղափոխական՝ 6, սոցիալ-դեմոկրատ՝ 6, անկուսակցական՝ 2, մահմեդական՝ 6, ռուս՝ 1, եզիդ՝ 1)։ Պառլամենտական քաղաքական պայքարի ընթացքում նրանք ամեն րոպե կարող էին մնալ փոքրամասնության մեջ և կորցնել իշխանությունը։

Պատմական նման պարագաներում արդյոք գիտական և ճշմարիտ է այն պնդումը, թե պառլամենտը կրում էր շինծու, սարքովի բնույթ և փաստորեն գոյություն ուներ ոչ թե հանրապետական, այլ դաշնակցական տոտալիտար Հայաստան։ Թվում է, որ տարրական տրամաբանությունը պետք է բացասական պատասխան տա նման հարցադրմանը, մանավանդ եթե հիշենք, որ Հայաստանի խորհրդի դիվանն էլ էր ընտրվել բազմակարծության դեմոկրատական եղանակով (խորհրդի նախագահ՝ Ավ. Սահակյան (ՀՀԴ), փոխ-նախագահ Գր. Տեր-Խաչատրյան (ՀԺԿ), փոխ-նախագահ՝ Դ. Զուբյան (սոցիալիստ-հեղափոխական), ավագ քարտուղար՝ Պ. Զաքարյան (անկուսակցական, հարող սոցիալ-դեմոկրատներին)։

---

9 Վեմ, 1934, հուլիս-օգոստոս, էջ 73—75։

«Դաշնակցական Հայաստան» թեզի կողմնակիցների գլխավոր փաստարկը Հայաստանի հանրապետության կառավարության կազմն է ըստ կուսակցականության։ Առաջին կառավարության կազմում 6 անդամներից 4-ը դաշնակցականներ էին, 2-ը անկուսակցականներ (Թիֆլիսում ստեղծված կազմը—վարչապետ՝ Հ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան, ներքին գործերի՝ Ա. Մանուկյան, ֆինանսների՝ Խ. Կարճիկյան (բոլորը ՀՀԴ), զինվորական՝ Հ. Հախվերդյան (անկ.)։ Քիչ հետո արդեն Երևանում նրանց միացավ տեղական անկուսակցական գործիչ Գ. Պետրոսյանը, որը դարձավ արդարադատության նախարար)։

Ուշու չէին ընդգրկված մնացած կուսակցությունները։ Պատասխանը, իվում է, պարզ է. դաշնակցականների համար ի՞նչ իմաստ ուներ համաձայնել քաղաքական պլյուրալիզմին պառլամենտում և այն ժխտել կառավարությունում, մանավանդ որ, ինչպես տեսանք, կառավարությունը պառլամենտի համեմատ ուներ երկրորդական դեր և լիովին ենթարկվում էր նրան։

Փաստերը ցույց են տալիս, որ դաշնակցականները կողմնակից են եղել կոալիցիոն կառավարությանը։ Դեռևս հունիսի 9-ին Ազգային խորհուրդը որոշում է կառավարություն կազմել միջկուսակցական սկզբունքով և վարչապետ ընտրել Հ. Քաջազնունուն, սակայն քաղաքական մյուս կուսակցությունները տարբեր պատճառներով հրաժարվել են մտնել այդ կառավարության մեջ։ ՀԺԿ-ն, օրինակ, պահանջում էր, որ դաշնակցության ձեռքում չկենտրոնացվեն այնպիսի ֆունկցիաներ, որոնք կարող են ազդել քաղաքականության վրա։ Հ. Քաջազնունին ՀԺԿ-ին առաջարկել էր տալ վերջնական պատասխան՝ համաձա՞յն է մտնել կառավարության մեջ, ստանալով երկու տեղ՝ արտաքին գործերի և ֆինանսների։ ՀԺԿ-ն քննարկելով Հ. Քաջազնունու առաջարկը, մերժել է այն և արգելել իր անդամներից որևէ մեկին՝ մտնել կառավարության մեջ։ Իսկ սոցիալիստ հեղափոխականներն ու սոցիալ-դեմոկրատները այդ ժամանակ սկզբունքորեն չէին ընդունում անկախ հայ պետության գաղափարը և, բնականաբար, հրաժարվեցին մասնակցել հայ անդրանիկ կառավարության աշխատանքներին։ Այդպիսի բարդ իրավիճակում հունիսի 30-ին հարցը նորից դրվում է Ազգային խորհրդի քննարկմանը, և ձայների մեծամասնությամբ որոշվում է կառավարությունը կազմել ոչ թե կոալիցիոն, այլ պերսոնալ սկզբունքով։ Կառավարության անդամներ դարձան այնպիսի գործիչներ, որոնք ունեին անձնական հեղինակություն, և դաշնակցության մեղքը չէր, որ նրանցից 4-ը պատկանում էին այդ կուսակցությանը։

Այդ կառավարության բնույթը ճշմարտորեն բացահայտվում էր հանրապետության անդրանիկ վարչապետ Հ. Քաջազնունու հայտարարությունում, որն արվեց օգոստոսի 3-ին, խորհրդի երկրորդ նիստում. «Բացառիկ ծանր պայմանների մեջ գործի է անցել իմ կազմած կառավարությունը։ Նա կոչված է իրականացնելու գործադիր իշխանություն մի պետության մեջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակավին դուրս չէ եկել իր կազմակերպման առաջին շրջանից։ Կառավարությունը չունի ոչ մի հենարան անցյալում. նա չի հաջորդում նախկին կառավարության՝ շարունակելու արդեն ընթացքի դրած պետական աշխատանքը, նա նույնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանության կարիքներին հարմարեցրած պատրաստի ապարատներ։ Նա հարկադրված է սկսելու ամեն բան սկզբից. անձև քաոսից և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին։

Մյուս կողմից կառավարությունը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մեջ, որի բնորոշման համար մի բառ կա միայն—կատաստրոֆային։

Չորս տարի տևող պատերազմը, մեծ հեղափոխությունը, ռուսական զորքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրության տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտությունը, տերիտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետությունների—այս խորին ցնցումները չէին կարող չթողնել իրենց հետևից ահռելի հետքեր։ Տնտեսական կյանքի ու ֆինանսական դրության կատարյալ քայքա-

յում, դադարում ապրանքների արդյունաբերության և փոխանակության, կենսամթերքների ծայր աստիճան պակասություն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայություն կամ սոսկալի թանկություն, ներմուծական բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցության դադարում, երթևեկության ուրիշ միջոցների պակասություն, ապա հարյուր հազարներով հաշվող անտուն և անսնունդ գաղթականություն, անապահով կացություն սահմանների վրա և որպես անխուսափելի հետևանք այս բոլորի—անիշխանություն։ Ահա թե ինչպիսի ծանր պայմանների մեջ կանչվել է աշխատանքի իմ կառավարությունը։

Այս բացառիկ դրությունը նախորոշում է արդեն կառավարության բնույթը։ Նա չի կարող ձգտել բազմակողմանի և լրիվ գործունեության, չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակվելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անհետաձգելի խնդիրներով։ Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանական վիճակից ու ստեղծել պետական շինարարության համար անհրաժեշտ պայմաններ—ահա թե ինչպես է ըմբռնում իր կոչումը ներկա կառավարությունը»[10]։

Համաձայն դրան, կառավարությունը դնում էր լուծման հետևյալ խնդիրները.

«Ա. Ներքին գործերի սահմաններում

1. Հաստատել երկրում տարրական իրավակարգ կյանքի և գույքի ապահովություն։
2. Բանալ հաղորդակցության ճանապարհները անարգել երթևեկության համար։
3. Վերականգնել փոստ-հեռագրական նորմալ հաղորդակցություն թե՛ երկրի մեջ և թե հարևան պետությունների հետ։
4. Ռուանդուն միջոցների դիմել կարելվույն չափ մեղմացնելու պարենավորման տագնապը։
5. Տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը՝ մասամբ վերադարձնելով իրենց նախկին տեղերը, մասամբ տեղավորելով նոր վայրերում։
6. Նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր ժողովի հավաքում, կարելվույն չափ շուտ։

Բ. Ֆինանսների սահմաններում հող պատրաստել սեփական դրամական սիստեմի հիմքը դնելու համար։ Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի երկիրը ապահովվի դրամական նշաններով, վերականգնի արդյունաբերական կյանքը և ապրանքների փոխանակությունը, ինչպես նաև մշակվի հարկերի առողջ սիստեմ։

Գ. Արդարադատության սահմաններում հարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրավահասկացման և իրավական սովորույթների պայմաններին, միաժամանակ մասնակից անելով քրեական դատավարությանը ժողովրդի ներկայացուցիչներին։

Դ. Զինվորական գործերի սահմաններում վերակազմել երկրի զինվորական ուժերը, նպատակ ունենալով ստեղծել թվով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահությամբ ուժեղ բանակ։

Ե. Արտաքին գործերի սահմաններում

1. Ամրացնել Օսմանյան կայսրության հետ հաշտությունը և բարիդրացիական հարաբերություններ հաստատել նրա հետ։ Խստիվ կատարել այն բոլոր պարտականությունները, որ մենք հանձն ենք առել Օսմանյան կայսրության հանդեպ և հետևել, որ օսմանյան կառավարությունը իր կողմից անի նույնը մեր վերաբերմամբ։ Մասնավորապես լուծել օսմանյան զորքերի մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը։

2. Ատրպատականի և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնության գալով՝ լուծել Հայաստանի և այդ պետությունների սահմանների հարցը,

---

10 Հորիզոն, 15. VIII. 1918։

հիմք ունենալով էթնիկական սկզբունքը, իբրև միակը որ համապատասխանում է ռամկավար պետությունների ոգուն և նպատակներին։

3. Լիկվիդացիայի ենթարկել՝ համաձայնության գալով Ատրպատականի և Վրաստանի հետ՝ ընդհանուր հիմնարկությունները և գույքը, որ մնացել են Անդրկովկասյան հանրապետությունից»[11]։

Այս էր կառավարության ծրագիրը։ Ինչպես վկայում էր Հ. Քաջազնունին, «սա կարող է անվանվել պետության գոյությունը ապահովեցնող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիր։ Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրենց ամբողջությամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի շարք շատ կարևոր և արդեն հասունացած խնդիրներ։ Բայց կառավարությունը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետև նրանց լուծումը այսօրվա պայմանների մեջ համարում է անկտրելի։ Կառավարությունը չի ուզում սխալանքների մեջ գցել երկիրը լայն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականություններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից»[12]։

Այդ առումով Հ. Քաջազնունու վերջին դրույթին համահնչուն էր այն միտքը, որը բոլշևիկների հայտագրում առաջ էր քաշել Ա. Մելիքյանը. «Նուրբաքանչյուր քաղաքական կուսակցություն, որ նպատակ է դրել իր գործունեության ընթացքում անշեղ կերպով հետևել իր ծրագրին և չխաբել ոչ ոքի, պարտավոր է նախ և առաջ պարզ և հստակ կերպով պատկերացնել իրեն և հասկանալ այն իրականությունը և քաղաքական այն դրությունը, որ գոյություն ունեն նրա շուրջը։ Քաղաքական կացության առանց այդ հստակ ըմբռնման ամեն մի կուսակցություն ենթակա է սայթաքումների և կարող է շփոթության մեջ ձգել ուրիշներին»[13]։ Ելնելով այդ սկզբունքից, Ա. Մելիքյանը խորհրդի օգոստոսի 27-ի նիստում սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անունից տվել է հանրապետության առաջին կառավարությանը օբյեկտիվ գնահատական. «Այն դիտողությունը, թե սոցիալ-դեմոկրատները խաչ են դրել այս կառավարության վրա, չի համապատասխանում իրականությանը։ Մենք այն կարծիքին ենք, որ այսպիսի քաղաքական անկայուն կացության մեջ պետք է աջակցել կառավարությանը»[14]։

Ինչ վերաբերում է կառավարության մեջ բոլշևիկների մտնելու հարցին, ապա այստեղ Ա. Մելիքյանն ուներ հստակ դիրքորոշում, որն ապացուցում է, թե բոլշևիկների առջև դաշնակցությունը չէր փակում կառավարության դրոները։ Ընդհակառակը, բոլշևիկներն իրենք չէին ուզում մասնակցել կառավարությանը։ Իր դիրքորոշման մասին սեպտեմբերի 29-ին Ա. Մելիքյանը «Խոսք» թերթում գրում էր. «Մարքսիստները, որոնք սակավ են Հայաստանի հանրապետության տերիտորիայի սահմաններում, որոնք չեն կազմում ուժեղ բանվորական դասակարգի և իրենց ընդհանուր աշխարհայացքով էապես տարբերվում են մյուս բոլոր կուսակցություններից, ավելի մեծ ծառայություն մատուցած կլինեն երկրին և ժողովրդին, եթե մնան լուրջ և խելացի քննադատողի դերում և հետևողականորեն առաջ տանեն այդ ավելի քան ծանր ու պատասխանատու պաշտոնը։ Առանց բանվորական մասսայի բուն երկրում նրանք կտրված կմնան մայր հողից և կոալիցիոն մինիստրության մեջ կենթարկվեն ուրիշի արբանյակը լինելու ոչ նախանձելի վիճակում»[15]։ Այդ առաջարկն Ա. Մելիքյանն անում էր ոչ միայն պառլամենտի սոցիալ-դեմոկրատական, այլ նաև էսէռական ֆրակցիային։

Բայց 1918 թ. աշնանը, երբ տեղի ունեցավ առաջին կառավարական ճգնաժամը (փաստ, որը չի կարող լինել տոտալիտար երկրում), սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան, որտեղ գերիշխում էին մենշևիկները և սոցիա-

---

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում։

13 Ա. Մ. Մելիքյան, Ընտիր երկեր, էջ 56։

14 Վեմ, 1934, հուլիս-օգոստոս, էջ 84։

15 Ա. Մ. Մելիքյան, Ընտիր երկեր, էջ 63—64։

լիստ-հեղափոխականները, որոշեց մտնել նորաստեղծ կառավարության մեջ։ Նրանց ընդառաջեցին, բայց սոցիալ-դեմոկրատները պահանջեցին երկու տեղ և անպայման՝ ներքին կամ արտաքին գործոց նախարարությունը։ Էսէռներն իրենց համար առանձին պահանջներ չունեին, բայց վճռականապես դեմ էին, որ արտաքին գործոց նախարարությունը հանձնվի ժողովրդականներին, իսկ ներքինը՝ սոցիալ-դեմոկրատներին։ Դրված պահանջներն ակնհայտ կերպով անընդունելի էին և, մերժում ստանալով այդ ֆրակցիաները հրաժարվեցին մտնել կառավարության մեջ[16]։

Այլ վերաբերմունք դրսևորեց ՀԺԿ-ն։ Նա Հայաստանի ամենաուժեղ կուսակցության առջև այս անգամ չդրեց որևէ պայման, դիմեց ողջամիտ փոխզիջման, որի արդյունքը եղավ կոալիցիոն կառավարության ստեղծումը։ Նոյեմբերի 4-ի նիստում հայտարարվեց նոր կառավարության կազմը, վարչապետ՝ Հ. Քաջազնունի, արտաքին գործոց նախարար՝ Ս. Տիգրանյան, ներքին գործոց՝ Ա. Մանուկյան, խնամատարության՝ Խ. Կարճիկյան (բոլորը ՀՀԴ), ֆինանսների՝ Ա. Էնֆիաջյան, արդարադատության՝ Ս. Հարությունյան, հանրային կրթության՝ Մ. Աթաբեգյան, պարենավորման՝ Լ. Ղուլյան (բոլորը ՀԺԿ), զինվորական՝ Հ. Հախվերդյան (անկ.)։

Այլևս Հայաստանի հանրապետության կառավարությունը միատարր չէր։ Նրա մեջ մտնում էին 4 դաշնակցական, 4 ժողովրդական, 1 անկուսակցական։ Այնպես որ, եթե որպես չափանիշ վերցնենք կառավարության կազմն ըստ կուսակցության, նույնիսկ այդ դեպքում էլ «Դաշնակցական Հայաստան» հասկացությունն անհիմն է։

Բայց գործը նույնիսկ այդ էլ չէր։ 1918 թ. տոտալիտար «Դաշնակցական Հայաստանը» գոյություն չէր կարող ունենալ հետևյալ երկու հիմնական պատճառներով։

Առաջին. լինելով ամենաուժեղ հայ կուսակցությունը, որի հետևից գնում էր ժողովրդի ճնշող մեծամասնությունը, դաշնակցությունն առանց որևէ դժվարության կարող էր Հայաստանում ստեղծել իր դիկտատուրան։ Սակայն 1918 թ. ստեղծված քաղաքական դժոխային պայմաններում դաշնակցությունը չէր ուզում ապագայի ամբողջ պատասխանատվությունը վերցնել իր վրա։ Նա աշխատում էր այդ պատասխանատվությունը բաժանել մյուս կուսակցությունների հետ և այդ պատճառով էլ պնդում էր, որ իշխանությունը (թե՛ օրենսդրական, թե՛ գործադիր) լինի բազմակուսակցական և կոալիցիոն։

Երկրորդ. չի կարելի մոռանալ դաշնակցության սոցիալական բազան։ Այդ կուսակցությունը եղել է մանրբուրժուական, էսէռական տիպի։ Իսկ մանր բուրժուազիան ուներ ոչ քիչ չափով դեմոկրատիզմի պոտենցիալ, և այդ պատմական իրողությունը չընդունել մենք չենք կարող։ Բայց այդ դեմոկրատիզմը մշտական կատեգորիա չէ։ Նա ենթարկվում է փոփոխությունների և կախված է մանր բուրժուազիայի տատանումներից՝ աջ կամ ձախ։

Քաջ հասկանալով, թե ինչ վտանգ է սպառնում դեմոկրատիային, երբ մանր բուրժուազիան թեքվում է դեպի աջ, Ա. Մելիքյանը գրում էր. «Դաշնակցական ֆրակցիան, որ Հայաստանի պառլամենտում թվականով ամենաուժեղն է և կենտրոնի կուսակցությունը, իր քաղաքական և սոցիալական դավանանքներով մեծապես տարբերվում է իր աջակողմից, ապա համեմատաբար նա մոտ է իր ձախակողմին և հատկապես հարում նրա էսէռական թևին, ինչպես մեր իրականության մեջ հայ էսէռները համարյա մեծապես նրան... Մենք փոքրամասնականների՝ դաշնակցության քննադատությունը համարում ենք տակտիկական և տվյալ քաղաքական կյանքի պայմանների տեսակետից՝ սխալ։ ...Անխնա քննադատության ենթարկելով կենտրոնին, դաշնակցությանը, փոքրամասնականները հակահեղափոխական աջակողմի՝ հայ ժող. կուսակց. քաղաքական-հասարակական արժեքի շանսերն էին ավելացնում, նրան կյանք և բովանդակություն էին տալիս։ Եվ առաջինին իրենցից հրելով, անգիտակցաբար ու անխուսափելիորեն նրան մղում էին դեպի

16 Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետությունը, Փարիզ, 1928, էջ 173։

աջ, դեպի հայ. ժող. կուսակց. գիրկը։ Այս երևույթն էր, որի հետևանքները մենք նախատեսում էինք, և վերջ ի վերջո սարսափելի փաստ դարձավ։ Դաշնակցության և հայ. ժող. կուսակց. պառլամենտական բլոկը այսօր հրապարակի վրա է»[17]։ Ցավոք, այն ժամանակ Հայաստանում չգտնվեցին այնպիսի ուժեր, որոնք հետևեին Ա. Մելիքյանի խորհրդին և խանգարեին այդ բլոկի ստեղծմանն ու զարգացմանը։

Ավարտելով, հանգում ենք այն վերջնական եզրակացության, որ Հայաստանի Հանրապետության պառլամենտական զարգացման սկզբնական փուլն ընթանում էր բուրժուական դեմոկրատիզմի ընդհանուր հունով։ 1918 թ. Հայաստանի Հանրապետությանը բնորոշ էին բոլոր օրինաչափությունները, որոնցով օժտված էին այլ բուրժուադեմոկրատական երկրները։ Դրա հետ մեկտեղ կային և որոշ առանձնահատկություններ՝ կապված արտաքին վտանգի, շարունակվող ազգային-ազատագրական պայքարի, երկրի ծայրաստիճան քայքայված տնտեսական վիճակի, կապիտալիստական հարաբերությունների չափազանց ցածր մակարդակի հետ։ Նման առանձնահատկություններն իրենց կնիքն էին թողնում բուրժուական դեմոկրատիզմի վրա, բայց ոչ մի դեպքում չէին ժխտում վերջինիս տոկայությունը և կենսունակությունը։

[illegible] պառլամենտ, ռեալ կառավարություն, ռեալ իշխող կուսակցություն և ռեալ ընդդիմադիր կուսակցություններ, որոնցից ամեն մեկն ուներ իր պառլամենտական տակտիկան։ Ժխտել այդ ամենը և պնդել պառլամենտի շինծուության, դաշնակցական դիկտատուրայի, «Դաշնակցական Հայաստանի» մասին՝ անհիմն է, սխալ և հակագիտական։

Հայաստանի Հանրապետությունը պառլամենտական բուրժուադեմոկրատական պետություն էր։ Հանրապետությունն օրինաչափ և անհրաժեշտ փուլ էր հայ ժողովրդի պատմական ճակատագրում։ Պառլամենտական դեմոկրատիզմի ավանդույթները անանց արժեք են հայ ժողովրդի պատմական հիշողության համակարգում։ Այդ ավանդույթները վկայում են մեր ժողովրդի քաղաքական մտածողության և քաղաքական մշակույթի պատշաճ մակարդակի մասին։ Հրաժարվել նման ավանդույթներից կամ ընդունել միայն խոսքով, նշանակում է հավասարեցնել հնագույն քաղաքակիրթ ազգը բարբարոսներին և շարունակել ազգային նիհիլիզմի հանցավոր բայքայիչ «գործը»։

ПАРЛАМЕНТ АРМЕНИИ И ПОЛИТИЧЕСКИЕ ПАРТИИ

В 1918 г.

Р. Л. ХУРШУДЯН

Резюме

В мае 1918 г. в исторической судьбе армянского народа произошло переломное событие—была восстановлена утерянная государственность. Официальная историография, в угоду идеологической коньюнктуре, давала негативное освещение этому событию, выдвигая искусственно построенные ложные умозаключения о характере и сущности новосозданного государства и его верховного органа. Анализ структуры парламента и деятельности входящих в него фракций политических партий в первые месяцы существования Республики Армении показывает, что последняя в генезисный период представляла собой классический тип парламентарного буржуазно-демократического государства. Обретение независимости, образование парламентской республики с выраженными демократическими атрибутами правления, политический плюрализм и многопартийная система,—все это в целом является объективным показателем безусловной прогрессивности исторического события.

17 Ա. Մ. Մելիքյան, Ընտիր երկեր, էջ 102—103.

ARMENIAN PARLIAMENT AND POLITICAL PARTIES IN 1918

R. L. KHURSHUDIAN

S u m m a r y

In may of 1918 a radical change was wrought in the historical fate of the Armenian people—State system, which was lost for ages, has been restored. Official historiography, in order to please the ideological conjuncture, gave a negative light to this event, putting forward artificially constructed, false conclusions about the character and essence of the newly created State and its supreme body. Structural analysis of Parliament and activity of political party fractures, forming a part of the Parliament, in the first months of existence of Armenian Republic shows, that the latter in the genesis period represented a classical type of parliamentary bourgeois-democratic State. Getting the independence, formation of parliamentary republic with pronounced democratic attributes of government, political pluralism and multi-party system-all these on the whole are an objective showing of undoubted progressiveness of the historical event.